# Նոբույուկի Ցուջիի համերգը Հայաստանում

Սեպտեմբերի 6-ին Երևանի Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ ճապոնացի դաշնակահար Նոբույուկի Ցուջիի համերգը: Պրն. Ցուջիին, ով 2009թ-ին արժանացել է Վան Քլայբըրնի միջազգային մրցույթի ոսկե մեդալի և շարունակել է համերգներով հանդես գալ ամբողջ աշխարհում, առաջին անգամ էր ելույթ ունենում Հայաստանում: Հանդիսատեսը մեծ ոգևորությամբ ընդունեց համերգը, և, չդադարող ծափահարություններին ի պատասխան՝ հնչեց ևս 3 կատարում, իսկ համերգից հետո հանդիսատեսը շտապեց հետնաբեմ՝ փոխանցելու իր երախտագիտությունը:




Արամ Խաչատրյան համերգասրահի պաստառի առջև (Նոբույուկի Ցուջիի պաշտոնական կայքից)




Սեպտեմբերի 5-ին կոնսերվատորիայում անցկացվող փորձը (Նոբույուկի Ցուջիի պաշտոնական կայքից)



Հանդիսատեսի հետ զրույց համերգից հետո (լուսանկարը՝ դեսպան Յամադայի)




Հանդիսատեսի հիացական գրառումը Ինստագրամում (Նոբույուկի Ցուջիի պաշտոնական կայքից)



Ձախից աջ՝ փառատոնի գլխավոր մենեջեր տկն. Հովհաննիսյան, փառատոնի հիմնադիր պրն. Ռոստոմյան, պրն. Ցուջիի, դեսպան Յամադա, պրն. Նակամուրա, պրն. Տակեմուրա